ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/157

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Լյուսաշ» ՍՊԸ և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր)

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցում, ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում

Մասնակցությամբ՝
«Լյուսաշ» ՍՊԸ-ի տնօրեն և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Լ. Գասպարյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15511-2019 գրությամբ «Լյուսաշ»

ՍՊԸ-ին և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 13.09.2019թ.-ի թիվ 17/16.4/5381-2019 գրության հիման վրա, 19.09.2019թ.-ին «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 19.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 26.09.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 26.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.10.2019թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 13.09.2019թ.-ի թիվ 17/16.4/5381-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2019 թվականի օգոստոսի 16-ին և 19-ին հայտարարված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/20 և ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17 ծածկագրերով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի բժշկական կենտրոնի վերակառուցման և ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգերին մասնակցության հայտ են ներկայացրել համապատասխանաբար՝ <<Լյուսաշ>> և <<Արբակ և որդիներ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կոնսորցիումը և <<Լյուսաշ>> և <<ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ>> սահմանափակ պատասխանատվությամբ

ընկերությունների կոնսորցիումը (այսուհետ՝ Կոնսորցիումներ): ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Կոնսորցիումներին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Կոնսորցիումների հայտերը մերժվել են՝ արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Լյուսաշ» ՍՊԸ-ի և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Լյուսաշ» ՍՊԸ-ի և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 20.09.2019թ.-ին գրությամբ դիմել է «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր)՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15511-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը 23.09.2019թ.-ի գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացած գրությանը 19.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15511-2019 «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի՝

Մրցույթի (ծածկագիր ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17) հանձնաժողովի արդյունքների ուղարկված արձանագրության մեջ նշված էր «Լյուսաշ» և «ԱՐՄԵՆ. ԷԼ. ԷՆԳ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի ներկայացված հայտում հայտնաբերված անհամապատասխանությունների մասին, որտեղ էական մասը վերաբերվում էր պակասող լիցենզիաներ նշված ցանկով նեկայացնելու պահանջը մեկ օրվա ընթացքում:

Հեռախոսով կապ հաստատեցինք ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գրասենյակ մեր խնդրի պարզաբանման համար և հայտնեցինք, որ լիցենզիաները իր բոլոր ներդիրներով հայտում ներկայացված են, սակայն ստացանք բացասական պատասխան այն մասին, որ պահանջվում են նոր լիցենզիաները, իսկ ներկայացրած ներկայացրած «Լյուսաշ» ՍՊԸ-ի լիցենզիաները չեն գործում, բացի այդ «ԷԼ. ԷՆԳ» ՍՊԸ-ի լիցենզիաների ներդիրները պակաս են պահանջվող ներդիրների ցանկից: Ըստ հայտում ներկայացրած կոնսորցիումի պայմանագրի, նշված նախագծային աշխատանքների բաշխման «ԷԼ. ԷՆԳ» ՍՊԸ-ն պետք է կատարի նախագծերի էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցերի մասը, որի համար ներկայացվել եր լիցենզիա իր ներդիրով:

Այդ պատճառով մեր կողմից նիստի չներկայացվեց պահանջվող շտկումները, քանի որ մեկ օրվա ընթացքում հնարավոր չէ ձեռքբերել նոր լիցենզիաներ:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ գնման ընթացակարգին մասնակցության հայտ ենք ներկայացրել հաշվի առնելով ընդունված 2019թ. հունիսի 19-ին ՀՀ օրենքը «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», որի վերաբերյալ ծանուցվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բոլոր նախագծային կազմակերպությունները:»:

Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել վերը շարադրած բացատրությունը և «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/157 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով 14.08.2019թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), իսկ 20.08.2019թ.-ին կատարվել է հրավերի փոփոխություն:

Ընթացակարգի հրավերով աշխատանքի կատարման համար պահանջվել է «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» լիցենզիայի հետևյալ ներդիրները.

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր,

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր,

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր,

- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր,

- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր,

- կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր:

Հրավերով սահմանվել է նաև, որ որպես «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ՝ պայմանագրի կատարման համար անհրաժեշտ է թվով 13 աշխատակիցներ:

Նույն հրավերով սահմանվել է, որ մասնակիցը պետք է ներկայացնի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստի, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ՝ նշելով Անուն, Ազգանուն և Հայրանուն:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Լյուսաշ» ՍՊԸ-ն և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր):

«Լյուսաշ» ՍՊԸ-ն և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր) մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Լյուսաշ» ՍՊԸ-ի և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) հայտում բացակայում են հրավերով պահանջվող «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» լիցենզիայի հետևյալ ներդիրները.

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր,

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորևսկման համակարգեր,

- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէեերգետիկական համակարգեր,

- էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր

- կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր:

Բացի այդ թիվ 1 հավելվածի 3-րդ կետում նշված է, որ պայմանագրի կատարումն իրականացվելու է թվով 10 աշխատակիցների միջոցով՝ հրավերով պահանջվող նվազագույնը 13 (կամ 12) աշխատակիցների փոխարեն:

Նույն արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել

նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 11.09.2019թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Լյուսաշ» ՍՊԸ-ի և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) կողմից սահմանված ժամկետում (մինչև 10.09.2019թ.) արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել և փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 23.07.2019թ.-ի թիվ 05/21/4295-19 և թիվ 05/22/4295-19 գրությունների համաձայն՝ 2019թ.-ի հունիսի 19-ի ««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-82-Ն օրենքի համաձայն՝ «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ի 16338-04 լիցենզիան և «Լյուշաս» ՍՊԸ-ի 12160-01,03,04 և 05 լիցենզիան գործում է մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 31-ը: Նախկինում տրված լիցենզիայի գործողությունը դադարում է 2020 թ.-ի հունվարի 1-ից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15511-2019 գրությամբ «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 7.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի

միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 7.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի գնանշման հարցման հայտը պատրաստելու մասին հրահանգի 2.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Շիրակի մարզի Արթիկի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներակայացրել նաև «Լյուսաշ» ՍՊԸ-ն և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Լյուսաշ» ՍՊԸ-ի և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) հայտում թիվ 1 հավելվածի 3-րդ կետում նշված է, որ պայմանագրի կատարումն իրականացվելու է թվով 10 աշխատակիցների միջոցով՝ հրավերով պահանջվող նվազագույնը 13 (կամ 12) աշխատակիցների փոխարեն: Ինչպես նաև բացակայում են հրավերով պահանջվող «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ

կոնստրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» լիցենզիայի հետևյալ ներդիրները.

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր,

- բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորուսկման համակարգեր,

- Էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէեերգետիկական համակարգեր,

- Էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր

- կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի' հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները: Սակայն վերջինիս կողմից որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում, սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում...:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը անդրադառնալով Մասնակցի կողմից նշված այն հանգամանքին, որ «Լյուսաշ» ՍՊԸ-ի լիցենզիան գործում է մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 31-ը, իսկ «ԱՐՄԵՆ ԷԼ. ԷՆԳ» ՍՊԸ-ի լիցենզիայի ներդիրները պակաս չեն պահանջվող ներդիրների ցանկից, ապա այս մասով Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

«ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17» ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտով «Լյուսաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 30.05.2008թ.-ին տրված քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության թիվ 12160 լիցենզիան և կից ներկայացվել է 12160-01-բնակելի, հասարակական և արտադրական, 12160-03-հիդրոտեխնիկական, 12160-04-էներգետիկ և 12160-05-կապի լիցենզիայի ներդիրները, իսկ «ԱՐՄԵՆ ԷԼ. ԷՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 15.02.2019թ.-ին տրված քաղաքաշինական փաստաթղթերի ինժիներական բաժինների մշակման գործունեության թիվ 16959 լիցենզիան և 16959-1-բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցերի լիցենզիայի ներդիրը: Սակայն Պատվիրատուի կողմից հրավերով պահանջվել էր ներկայացնել բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցերի, ինչպես նաև բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգերի ներդիրներ: Ուստի, այս պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԱՐՄԵՆ ԷԼ. ԷՆԳ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել թիվ 16959 լիցենզիայի՝ հրավերով պահանջվող բոլոր ներդիրները:

Ինչ վերաբերում է «Լյուսաշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 12160 լիցենզիային և ներկայացրած ներդիրներին, ապա, այս պարագայում, Մասնակցի կողմից ընթացակարգի քննության ընթացքում ներկայացվեց վերաբերելի ապացույց այն մասին, որ «Լյուսաշ» ՍՊԸ-ի ներկայացրած լիցենզիան և ներդիրները գործում են մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 31-ը, ուստի, այս պարագայում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, Մասնակցի կողմից ներկայացված հայտում լիցենզիայի մասով, արձանագրելով անհամապատասխանություն, իսկ այնուհետև այդ անհամապատասխանությունը չշտկելու պատճառա-

բանությամբ մերժելով վերջինիս հայտը, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լյուսաշ» ՍՊԸ-ն և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր), Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով թիվ 1 հավելվածով՝ դիմում-հայտարարությունում արձանագրված անհամապատասխանությունների շտկումը, դրանով իսկ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

Սույն դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակիցները հանդես են եկել համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում), ուստի մասնակիցները պետք է կրեն համատեղ և համապարտ պատասխանատվություն, հիմք ընդունելով Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ ենթակետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15511-2019 գրությամբ «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Լյուսաշ» ՍՊԸ-ին և «ԱՐՄԵՆ.ԷԼ.ԷՆԳ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**